

“Տերձուածող” անուանելով (տ. Գիւան Է. Թիֆ. 1908, էջ 371). նոյնպէս նշանաւոր եղած են հայ կաթողիկէ հասարակութեան կազմակերպութեան մէջ Մանուկի որդիքն Նազարէթ (ծն. 1783) եւ Արրահամ (ծն. 1793), եւ վերջնոյս կենդանի որդիքն Վսեմաշուք Յովհաննէս Էֆ. եւ Մկրր Պէյ հարազատները: (Հմմտ. Մէճմուա 1906, Թ. 4361, Բաշեան, Բազմ. 1908, էջ 242, 90, 377, 99.)

Սոյն ԱլաՏվէրտեան գերդաստանի մէկ ճիւղէն սերած էր Կարապետ Վ. Մելիքեան, Հնձեցի, Արքեպ. Թիֆլիզի, ինչպէս յաջորդ գրութեան մէջ կ'երեւայ ինքնին իսկ Մանուկ Ալա ԱլաՏվէրտեանի վարմունքէն:

Ինք ծնած էր Կարնոյ Հինձք գիւղը, ԱլաՏվէրտեան գերդաստանին որրանը: Հօրն անունն էր Տէր Յակոբ ՔՏՆյ. Մելիքեան. աշակերտած էր Կարնոյ Հնձուց Կարմիր վանքի առաջնորդ Յակոբ վարդապետին, որմէ նաեւ ձեռնադրուած էր անշուշտ վարդապետ, իբրեւ միաբան նոյն վանաց:

Թէպէտ ծննդեան եւ ձեռնադրութեան թուականները ճշդիւ ծանօթ չեն, սակայն եպիսկոպոս ձեռնադրուելուն թուականը մերձաւորապէս կրնանք ճշդել, վասն զի ձեռնադրուած էր Էջմիածնի Յակոբ Շամախեցի կաթողիկոսէն, որ ընտրուած էր Կ.Պոլիս 1759ին, եւ վախճանած՝ 21 Մարտ 1763ին: Կարապետ ինքնագիր մէկ նամակին մէջ, զոր 1789ին Աւրոնա քաղաքին մէջ գրած է, կ'ըսէ թէ 27 տարի